ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2025 Թ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

N ԿԶՆԱԿ-ԳՀԾՁԲ-26/01 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք.Երևան 30 ապրիլի 2026 թ.

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Ա. Թորոսյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու») մի կողմից, և Ջի էՄ ՔՈՆՍԱԼԹ-ն, ի դեմս տնօրեն Գոհար Մարգարյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից (միասին՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով Ջի էՄ ՔՈՆՍԱԼԹ-ի կողմից 30.04.2026 թ-ին ներկայացված Պայմանագիրը երկարաձգելու մասին դիմումը, ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը, ՀՀ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ ենթակետը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել Պայմանագրի կատարման ժամկետը 20 օրացուցային օրով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 67 Հ/Հ՝ 220303350429000 Հեռ.՝ 010 57 21 00 Էլ. հասցե՝ info@kznak.am ՀՎՀՀ՝ 02657678 Ժ. Հարությունյան ստորագրություն Կ.Տ.	Ջի էՄ ՔՈՆՍԱԼԹ Հասցե՝ քաղաք Երևան, Տիչինայի 3-րդ նրբանցք, Շինություն՝ 2/10 Հ/Հ՝ Հեռ.՝ +37441451172 Էլ. հասցե՝ consultgmllc@gmail.com ՀՎՀՀ՝ 00419022 Գոհար Մարգարյան ստորագրություն Կ.Տ.